07.09.2026թ.

Պատվիրատու՝ է ԶԻՆԱՊԱՀԻ Զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամ
Հաստատված է ԶԻՆԱՊԱՀԻ մրցութային
Հանձնաժողովի 03.09.2026թ. . N 2026թ./02
արձանագրությամբ

ՀՐԱՎԵՐ

«Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի» (այսուհետ՝ ԶԻՆԱՊԱՀ կամ Պատվիրատու) համար **10-ամյակին նվիրված ինտեգրված հաղորդակցության և հանգանակության (ֆանդրայզինգի) արշավի մշակման և իրականացման ծառայությունների մատուցմանպայմանագիր կնքելու նպատակով հայտարարված Բաց մրցույթի (Մրցույթ)**:

Հարգելի՛ մասնակից, նախքան մրցութային հայտ (այսուհետ՝ Մրցութային հայտ կամ Հայտ) կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասն ուսումնասիրել սույն Հրավերը, քանի որ Հրավերի բովանդակությանը չհամապատասխանող Հայտերը ենթակա են մերժման։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ԶԻՆԱՊԱՀԻ 10-ամյակին նվիրված ինտեգրված հաղորդակցության և հանգանակության արշավի մշակման ու իրականացման ծառայությունների մատուցման պայմանագրի կնքում»

1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները և դրանց գնահատման չափորոշիչները
3. Հրավերում և Հայտերում փոփոխություն կատարելու կարգը
4. Հայտը ներկայացնելու կարգը, Հայտը և կից փաստաթղթերի ցանկը
5. Հայտերի բացումը, գնահատումը և արդյունքների ամփոփումը
6. Պայմանագրի կնքումը
7. Մրցույթը չկայացած հայտարարելը

Սույն Հրավերը նպատակ ունի ԶԻՆԱՊԱՀԻ կողմից հայտարարված Մրցույթին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց/կազմակերպություններին (այսուհետ նաև՝ «Մասնակից») տեղեկացնել Մրցույթի պայմանների և անցկացման, գնման առարկայի, Հաղթող մասնակցին ընտրելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու Մրցույթի Հայտը պատրաստելիս։ Հայտեր կարող են ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) գրանցված, ինչպես նաև օտարերկրյա իրավաբանական անձինք (գործակալություններ,

կոնսորցիումներ)՝ պայմանով, որ ապահովեն ծառայությունների մատուցումը սույն Հրավերով սահմանված ծավալով և ժամկետներում: Սույն Մրցույթի ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության և լուծման ՀՀ դատարաններում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մրցութային հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ media@zinapah.am: Հարցերի դեպքում կարող եք դիմել նաև ՁԻՆԱՊԱՀԻ հանրային կապերի և հաղորդակցության տնօրեն Լիլյա Գրիգորյանին՝ Lilya.grigoryan@zinapah.am, հեռ.՝ +374 94 034430:

ՄԱՍ 1

1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գնման առարկա է հանդիսանում ՁԻՆԱՊԱՀԻ հիմնադրման 10-ամյակին նվիրված ինտեգրված հաղորդակցության և հանգանակության արշավի մշակման ու իրականացման, ինչպես նաև հարակից միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պայմանագրի կնքումը՝ Հայաստանում և արտերկրում (առաջնահերթ՝ ԱՄՆ-ում գործող հայկական համայնքներում):

1.1. Նախապատմություն

ՁԻՆԱՊԱՀ Զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամը հիմնադրվել է 2017թ.՝ ապահովելու կայուն հատուցումներ՝ զոհված և անհայտ բացակայող զինծառայողների ընտանիքների, ինչպես նաև խորը և ծանր ֆունկցիոնալ սահմանափակմամբ (1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամություն ունեցող) զինծառայողների բարեկեցության ապահովմանը, ովքեր պաշտպանել են հայրենիքը և նրա սահմանները՝ ապագա սերունդների խաղաղության և անվտանգության համար:

ՁԻՆԱՊԱՀԻ առաքելությունն է համախմբել ազգին՝ կանգնելու զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին, ապահովելու նրանց ֆինանսական կայունությունը և արժանապատիվ կյանքը՝ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ մեր հանձնառությամբ:

ՁԻՆԱՊԱՀԸ ապաքաղաքական կառույց է և գործում է համաձայն ՀՀ օրենքի: ՁԻՆԱՊԱՀԸ կառավարվում է **անկախ** Հոգաբարձուների խորհրդի **կողմից,** որի կազմում ընդգրկված են բարձր հեղինակություն վայելող մասնագետներ՝ ֆինանսների, բանկային համակարգի, բիզնեսի, ճգնաժամային կառավարման, դրամահավաքի և ակտիվների կառավարման ոլորտներից: Հիմնադրամը գործում է փորձառու և մոտիվացված գործադիր թիմի կողմից:

ԶԻՆԱՊԱՀԸ եզակի հիմնադրամ է տարածաշրջանում, որի շրջանակներում Հայաստանի յուրաքանչյուր աշխատող քաղաքացի պարտադիր դրոշմանիշային վճար է կատարում իր աշխատավարձից: Հիմնադրամը համահայկական նախաձեռնություն է, որի նպատակն է ապահովել կյանքը և առողջությունը հանուն Հայաստանի անվտանգության զոհաբերած զինծառայողների և նրանց ընտանիքների բարեկեցությունը:

ԶԻՆԱՊԱՀԻ միջոցները ձևավորվում են՝

- Հայաստանի հարկատուների կողմից կատարվող **դրոշմանիշային պարտադիր ամսական վճարներից**՝ 1,000 կամ 15,000 ՀՀ դրամ (կախված եկամտի չափից)
- Հայաստանից և աշխարհից ստացվող **նվիրատվություններից**
- ԶԻՆԱՊԱՀԻ **ակտիվների կառավարման արդյունքում ստացված եկամուտներից**

ԶԻՆԱՊԱՀԻ կայքը հնարավորություն է տալիս հանրությանը հետևելու եկամուտների հոսքերին՝ ստացված պարտադիր վճարներից, նվիրատվություններից և ներդրումներից և շահառուներին կատարվող հատուցումներին: Բացի այդ, կայքում պարբերաբար հրապարակվում են գործադիր տնօրենի եռամսյակային և տարեկան հաշվետվությունները, ինչպես նաև աշխարհի լավագույն 10 աուդիտորական ընկերություններից մեկի կողմից իրականացվող տարեկան աուդիտի հաշվետվությունները՝ ապահովելով լիարժեք թափանցիկություն և հաշվետվողականություն:

ԶԻՆԱՊԱՀԻ պաշտոնական հաղորդակցության ալիքներն են՝ պաշտոնական կայքէջը (zinapah.am), Facebook, Instagram, YouTube և LinkedIn: Առաջարկ ներկայացնող Մասնակիցներից ակնկալվում է ուսումնասիրել այս հարթակները՝ ԶԻՆԱՊԱՀԻ առկա հաղորդակցության ոճը, ինստիտուցիոնալ տոնայնությունը, վիզուալ ինքնությունը, թիրախային լսարանները, կրկնվող հաղորդագրությունները և նախորդ արշավները հասկանալու համար:

1.2. Առաջադրանքի նպատակը

ԶԻՆԱՊԱՀԸ փնտրում է փորձառու կազմակերպության՝ Հայաստանում և արտերկրում տեսանելի, վստահելի և հուզական արձագանք ստեղծող 10-ամյակի արշավ մշակելու և իրականացնելու նպատակով: Արշավը պետք է՝

- ✓ արժևորի ԶԻՆԱՊԱՀԻ 10-ամյա գործունեությունը և ներդրումը՝ հիշարժան ներկայացնելով ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրի հայկական համայնքներում,
- ✓ ավելացնի Հայաստանից և արտերկրի հայկական համայնքներից պարբերական և միանվագ նվիրաբերությունների ծավալը,
- ✓ ամրապնդի ԶԻՆԱՊԱՀԻ հեղինակությունն ու տեսանելիությունը լայն հանրության, շահառուների, գործընկերների և ինստիտուցիոնալ շահագրգիռ կողմերի շրջանում,

- ✓ ստեղծի նվիրատուների համար բովանդակալից փորձառություններ, որոնք կնպաստեն առկա նվիրատուների հետ հարաբերությունների պահպանմանը, նոր նվիրատուների ներգրավմանը և երկարաժամկետ համագործակցությանը,
- ✓ ապահովի շարունակական, դրական և թիրախավորված ներկայություն լրատվամիջոցներում և թվային հարթակներում:

1.3. Թիրախային լսարաններ

Լսարան	Հիմնական նպատակ
Լայն հանրություն	Իրազեկվածություն, մասնակցություն և նվիրաբերելու մատչելի հնարավորություն
Շահագրգիռ կողմեր և գործընկերներ	Ճանաչում, վստահություն և համայնքային կապ
Շահառուներ	Ճանաչում, վստահություն, վկայություններ և համայնքային կապ
Նվիրատուներ Հայաստանում	Հարաբերությունների պահպանում, կրկնակի ներգրավում, նոր նվիրատուների և պարբերական նվիրաբերությունների ներգրավում
Հայկական սփյուռքի համայնքների նվիրատուներ (որոշումը՝ փաստերի և վերլուծության հիման վրա)	Կապ Հայաստանի հետ, մասնակցություն և սահմաններից դուրս նվիրատվության մշակույթի զարգացում, Հայաստանում և Սփյուռքում առկա ու հնարավոր նվիրատուների ներգրավում

1.4. Ծառայությունների շրջանակը և պահանջվող արդյունքները

Ա. Հայաստան. 10-ամյակի համապարփակ արշավ և դրամահավաքի միջոցառում

- Մշակել և իրականացնել ՋԻՆԱՊԱՀԻ 10-ամյակի արշավը ներառելով՝
  - արշավի թեման, կարգախոսը, ժամանակացույցը, հիմնական ուղերձները՝ համահունչ ՋԻՆԱՊԱՀԻ հաղորդակցման ռազմավարությանը և վիզուալ ինքնությանը,
  - հանրային կապերի և մեդիա ռազմավարությունը (մամուլի նյութերը, խոսնակների աջակցությունը, մեդիա գործընկերությունները և օրգանական մեդիա լուսաբանման հնարավորություններ),
  - անհատ և կորպորատիվ նվիրատուների ներգրավման, պահպանման և պարբերական նվիրաբերությունների խթանման ռազմավարությունները,
  - կորպորատիվ գործընկերությունների և հովանավորության ռազմավարությունը՝ ներառյալ հովանավորության փաթեթները,
  - 3–4 րոպեանոց հոբելյանական տեսահովակի պատրաստումը, որը կներկայացնի ՋԻՆԱՊԱՀԻ անցած ճանապարհը, ազդեցությունը և ապագայի տեսլականը,

- 30–40 էջանոց հոբելյանական ներկայացուցչական հրատարակության մշակումն ու արտադրությունը։
- Այլ առաջարկություններ

- Մշակել արշավի ամբողջական գաղափարը և կազմակերպել Հայաստանում 10-ամյակին նվիրված դրամահավաքի միջոցառումը՝ ներառյալ ծրագիրը, անցկացման վայրը, հրավերները, տեխնիկական ապահովումն ու միջոցառման ընթացիկ կառավարումը։
- Բոլոր առաջարկությունները պետք է միտված լինեն արդյունքի և թվերով հիմնավորված

Բ. Հայկական սփյուռք. ռազմավարական առաջարկություններ և առաջարկվող գործողություններ

ՁԻՆԱՊԱՀԸ նախապես չի սահմանել հայկական սփյուռքի հետ 10-ամյակին նվիրված աշխատանքի ձևաչափը։ Գործակալությունը պետք է գնահատի հնարավորությունները և առաջարկի հաղորդակցության, նվիրատուների ներգրավման ու դրամահավաքի առավել արդյունավետ մոտեցումը՝ սկզբնական փուլում կենտրոնանալով Միացյալ Նահանգների վրա։

- Գործակալությունը պետք է՝
  - առաջարկի Սփյուռքի համար համապատասխան հաղորդակցման և դրամահավաքի ռազմավարություն,
  - առաջարկի ներգրավման կամ դրամահավաքի հայեցակարգ, որը կարող է ներառել նվիրատուների նախաճաշ, ընդունելություն, գալա-երեկո, համայնքային միջոցառում, կորպորատիվ կլոր սեղան կամ այլ նպատակահարմար ձևաչափ,
  - տրամադրի առաջարկի հիմնավորումը, թիրախային լսարանը, առաջարկվող վայրը, նախնական բյուջեն, գնահատված ծախսերի հիման վրա հաշվարկված դրամահավաքի հնարավոր ներուժը, իրականացման պահանջները և ակնկալվող արդյունքները,
  - ՁԻՆԱՊԱՀի հետ քննարկումից և հաստատումից հետո ընտրված մոտեցման համար մշակի աշխատանքների մանրամասն շրջանակ, իրականացման պլան, ժամանակացույց և բյուջե։

Հայաստանի և Սփյուռքի բաղադրիչները պետք է ներկայացվեն և բյուջետավորվեն առանձին։

Գործակալության պատասխանատվությունը և աշխատանքի կազմակերպումը

Ընտրված գործակալությունից ակնկալվում է ապահովել ռազմավարական, ստեղծագործական, արտադրական և նախագծի կառավարման ամբողջական ղեկավարում՝ գաղափարի մշակումից մինչև իրականացում։ Առաջարկներում պետք է հստակ տարանջատվեն կազմակերպության պարտականությունները, ՁԻՆԱՊԱՀի կողմից տրամադրվող նյութերն ու հաստատումները, երրորդ

կողմերից կախվածությունները, ինչպես նաև լրացուցիչ կամ առանձին գնանշվող ծառայությունները: Շահառուների հետ աշխատանքը պետք է իրականացվի առանձնահատուկ զգուշությամբ՝ պատմությունների ներկայացման և բովանդակության արտադրության բոլոր փուլերում պահպանելով նրանց արժանապատվությունը, համաձայնությունը և գաղտնիությունը:

ՄԱՍ 2

2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

2.1. Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք Հայտը ներկայացնելու օր վա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ:

ՁԻՆԱՊԱՀԻ կողմից չի կարող ձեռքբերում իրականացվել ՁԻՆԱՊԱՀԻ հետ աշխատանքային հարա բերություններում գտնվող անձանց կամ ՁԻՆԱՊԱՀԻ աշխատանքների կատարմանը կամ ծառայութ յունների մատուցմանը ներգրավված անձանց հետ փոխկապակցված անձանցից:

Սույն կետի իմաստով՝

1. ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ ե ն կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից,

2. ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կա մ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելին տնօրինող Մասնակից,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որ ոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ խորհրդի ան դամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգի ալ մարմնի նախագահ, անդամ,

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջակ ան ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշու մների կայացման հարցում որևէ էական ազդեցություն ունի:

3. ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող Մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) տասը և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները,

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող Մասնակիցը (բաժնետերը) և (կամ) Մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե Մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն,

գ. նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ,

դ. նրանք գործել կամ գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից

Սույն կետի իմաստով ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ կամ եղբոր ամուսինն ու երեխաները:

2.2. Սույն ընթացակարգին մասնակցող ընկերությունների գնահատման չափորոշիչներն են

	Գնահատման չափանիշ	Ի՞նչ է գնահատվում	Կշիռ
1.	Ռազմավարական մոտեցում և համապարփակ արշավի գաղափար և իրականացում	• Տեխնիկական առաջարկ՝ մեթոդաբանություն, աշխատանքային պլան, ակնկալվող արդյունքներ, թիմի դերեր, ինչպես նաև կազմակերպության և ԶԻՆԱՊԱՀԻ պարտականությունները: • Հաղորդակցման ռազմավարության որակը, Հայաստան–Սփյուռք մոտեցումը, լսարանների սեգմենտավորումը, հիմնական ուղերձները և նվիրատուների ներգրավման ինտեգրումը հոբելյանական գործողություններին	25%
2.	Առաջարկվող գաղափարների ստեղծագործականությունն ու որակը	• Ինքնատիպություն, հուզական ազդեցություն, համապատասխանություն ԶԻՆԱՊԱՀԻ արժեքներին, հանրությանը, նվիրատուներին, գործընկերներին և շահառուներին ներգրավելու ներուժ	25%
3.	Համապատասխան փորձ և իրականացման կարողություն	• Կազմակերպության ներկայացում՝ ընկերության ընդհանուր նկարագիր, թիմի կառուցվածք, համապատասխան փորձ և համապարփակ արշավների, դրամահավաքի ծրագրերի ու միջոցառումների պորտֆոլիո	20%

		• 10-ամյակի արշավների, դրամահավաքի/նվիրատուների ներգրավման, հանրային միջոցառումների, մեդիա հարաբերությունների և Սփյուռքի հետ հաղորդակցության փորձ, ինչպես նաև առաջարկվող թիմի և գործընկերների որակավորումը: • Երաշխավորագրեր՝ առնվազն երկու համապատասխան պատվիրատուի կոնտակտային տվյալներ և երաշխավորագիր:	
4.	Բյուջե, ծախսարդյունավետություն և ժամանակացույց	• Ծախսարդյունավետություն, բյուջեի հստակություն ըստ ձևաչափի, ակնկալվող արդյունքներ, ժամանակացույց, կատարողականի հիմնական ցուցանիշներ (KPI), մշտադիտարկման և գնահատման մեթոդաբանություն • Նախագծի ժամանակացույց՝ հիմնական փուլերն ու վերջնաժամկետները՝ կազմակերպության ընտրությունից մինչև արշավի մեկնարկ, միջոցառման իրականացում և հաշվետվության ներկայացում:	30%

Հայաստանի և Սփյուռքի բաղադրիչները ենթակա են առանձին գնահատման՝ Հանձնաժողովը կարող է հաղթող ընտրել յուրաքանչյուր բաղադրիչի համար առանձին կամ մեկ կազմակերպություն՝ երկուսի համար ընդհանուր:

ՄԱՍ 3

3. ՀՐԱՎԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Հրավերում փոփոխությունները կարող են կատարվել մինչև Հայտերի բացման օրը: Հայտերում փոփոխություններ կատարելու դեպքում Մասնակիցներն իրավունք ունեն սույն կանոնակարգով ս ահմանված կարգով Հայտերում կատարել լրացուցիչ փոփոխություններ: ՁԻՆԱՊԱՀԻ Հրավերում փ ոփոխության կատարման դեպքում ՁԻՆԱՊԱՀԸ չի կրում փոփոխության արդյունքում Մասնակիցնե րի կրած իրական վնասների ռիսկը:

3.2. Մասնակիցները մինչև Հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտը կարող են փոխ ել կամ հետ վերցնել Հայտերը: Մրցութային Հայտի փոփոխումը կատարվում է սույն կանոնակարգո վ սահմանված Մրցութային Հայտ ներկայացնելու համար նախատեսված կարգով: Մասնակիցները նույն կարգով կարող են հետ վերցնել Մրցութային Հայտերը, մասնավորապես Հրավերի 4.2րդ կետու մ նշված հասցեին ներկայացնելով դիմում Մրցութային Հայտը հետ վերցնելու կամ փոփոխելու վեր աբերյալ:

ՄԱՍ 4

4. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1. Մրցութային Հայտերը Մասնակիցները ՁԻՆԱՊԱՀԻՆ ներկայացնում են փաստաթղթային

եղանակով:

4.2. Մրցութային Հայտերը և սույն Հրավերով սահմանված փաստաթղթերը ներկայացվում են ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, սենյակ 317 հասցեում՝ ԶԻՆԱՊԱՀԻ գրասենյակ՝ առձեռն մինչև 2026թ. նոյեմբերի 2-ը՝ ժամը 16:00:

4.2.1. Մասնակիցը Մրցութային Հայտը ներկայացնում է սոսնձված, կնքված և ստորագրված ծրարով, որում ներառվում են՝ Բաց մրցույթի մասին Հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերի բնօրինակները և պատճենները: Սույն կետով սահմանված փակ ծրարը արտաքինից պետք է պարունակի տեղեկատվություն մասնակցի էլեկտրոնային ծանուցման հասցեի վերաբերյալ:

4.3. Հրավերով սահմանվում են այն փաստաթղթերը, որոնց բնօրինակը պետք է ներկայացվի Հայտով: Բնօրինակի ներկայացման վերաբերյալ նշում չպարունակելու պարագայում, ներկայացվում են սահմանված փաստաթղթերի պատճենները:

4.4. Մասնակիցը չի կարող նույն մրցույթի շրջանակներում ներկայացնել մեկից ավելի Մրցութային Հայտ: Նույն մրցույթի շրջանակներում Մասնակցի կողմից ներկայացված բոլոր Մրցութային Հայտերը հանդիսանում են անվավեր և չեն դիտարկվում ԶԻՆԱՊԱՀԻ կողմից՝ բացառությամբ սկզբնական Հայտում սույն Հրավերով սահմանված եղանակով փոփոխություններ կատարելու նպատակով ներկայացված փաստաթղթերի:

4.5. Մրցութային Հայտը և կից փաստաթղթերը՝

Հավելված 1

Մրցութային Հայտի օրինակելի ձև

Պահանջվող տեղեկատվություն	**Մանրամասներ**
Մասնակից կազմակերպության (գործակալության) անվանումը	
Պետական գրանցման համարը	
Գործունեության հասցեն	
Կոնտակտային անձի բջջային հեռախոսահամարը	
ՀՎՀՀ	
Հայտը ներկայացնող (լրացնող) անձի անուն ազգանունը	
Հայտը ներկայացնող անձի անձնագրի կամ նույնականացման քարտի տվյալները	

Պահանջվող տեղեկատվություն	Մանրամասներ
Հայտը ներկայացնող անձի պաշտոնը Մասնակից կազմակերպությունում	
Կազմակերպության հիմնադրման տարեթիվը	
Հայտի լրացման ամսաթիվը	
Հայտը ներկայացնող անձի ստորագրությունը	
Ռազմավարական մոտեցում և համապարփակ արշավի գաղափար և իրականացման առաջարկը	
Ստեղծագործական գաղափարի առաջարկ	
Համապատասխան փորձի և իրականացման կարողություն ներկայացում	
Բյուջե, ծախսարդյունավետություն և ժամանակացույց	

4.6. Մրցութային Հայտին կից ներկայացվող փաստաթղթեր են՝

Հայտ՝ ՋԻՆԱՊԱՀԻ 10-ամյակին նվիրված ինտեգրված հաղորդակցության և հանգանակության արշավի մշակման ու իրականացման ծառայությունների առաջարկ, որը պետք է ներառի՝

Ռազմավարական մոտեցում և համապարփակ արշավի գաղափար և իրականացման առաջարկը, որը պետք է ներառի՝

- նախագծի իրականացման մեթոդաբանությունը,
- կազմակերպության և ՋԻՆԱՊԱՀԻ պարտականությունների բաշխումը,
- հաղորդակցման ռազմավարությունը,
- Հայաստան–Սփյուռք տարբերակված մոտեցումը,
- թիրախային լսարանների սեգմենտավորումը,
- հիմնական ուղերձներն ու հաղորդակցման ալիքները,
- նվիրատուների ներգրավման և դրամահավաքի բաղադրիչի ինտեգրումը հոբելյանական արշավին ու միջոցառումներին։

Ստեղծագործական գաղափարի առաջարկ, որը պետք է ներառի՝

- արշավի հիմնական ստեղծագործական գաղափարը,
- Հայաստանում և Սփյուռքում իրականացվող հոբելյանական գործողությունների ու միջոցառումների առաջարկվող ձևաչափերը,
- հանրությանը, նվիրատուներին, գործընկերներին և շահառուներին ներգրավելու առաջարկվող մեխանիզմները,
- վիզուալ լուծումների առաջարկներ կամ էսքիզներ

Համապատասխան փորձի և իրականացման կարողություն ներկայացում, որը պետք է ներառի՝

- կազմակերպության ընդհանուր նկարագիրը,
- կազմակերպության և առաջարկվող թիմի կառուցվածքը,
- նախագծում ներգրավվող թիմի անդամների դերերն ու պարտականությունները,
- թիմի հիմնական անդամների ինքնակենսագրականները կամ մասնագիտական ամփոփ նկարագրերը,
- Համապատասխան փորձը ներկայացնող պորտֆոլիո, որը պետք է ներառի՝
  - Հայաստանում համապարփակ և հոբելյանական արշավների իրականացման, դրամահավաքի և նվիրատուների ներգրավման ծրագրերի, հանրային միջոցառումների կազմակերպման փորձը,
  - Սփյուռքի հետ հաղորդակցության կամ Սփյուռքում ծրագրերի իրականացման փորձը,
  - առնվազն երկու համապատասխան պատվիրատուի երաշխավորագիր,
  - երաշխավորագիր տրամադրող անձանց անունը, պաշտոնը, կազմակերպությունը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն։

Բյուջե, ծախսարդյունավետություն և ժամանակացույց

- *Հայաստանում իրականացվող արշավի և հոբելյանական միջոցառման ֆինանսական առաջարկ,* որը պետք է ներառի՝
  - առաջարկվող ընդհանուր բյուջեն՝ ՀՀ դրամով, ներառյալ բոլոր հարկերն ու պարտադիր վճարները,

- բյուջեի մանրամասն բացվածքը՝ ըստ աշխատանքների, ծառայությունների, միջոցառումների և հիմնական ծախսային հոդվածների,

- *Սփյուռքի ուղղությամբ իրականացվող աշխատանքների նախնական ֆինանսական առաջարկ*, որը պետք է ներառի՝
  - առաջարկվող ընդհանուր նախնական բյուջեն՝ ՀՀ դրամով, ներառյալ բոլոր հարկերն ու պարտադիր վճարները,
  - հիմնական աշխատանքների, ծառայությունների, միջոցառումների և ծախսային հոդվածների նախնական բացվածքը,
- *Նախագծի իրականացման մանրամասն ժամանակացույց*, որը պետք է ներառի՝
  - նախագծի հիմնական փուլերը, աշխատանքները և վերջնաժամկետները,
  - արշավի մշակման, նախապատրաստման և մեկնարկի ժամկետները,
  - միջոցառումների նախապատրաստման և իրականացման ժամկետները,
  - միջանկյալ արդյունքների և վերջնական հաշվետվության ներկայացման ժամկետները:

ՄԱՍ 5

5. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ, ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

5.1. Մրցութային Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետն է 2026թ. նոյեմբերի 2-ը՝ ժամը 16:00: Մրցութային Հայտերի բացման համար սահմանված օրը և ժամին՝ 2026թ. նոյեմբերի 2-ին՝ ժամը 17:00-ին, Վ. Սարգսյան 26/1, սենյակ 317 հասցեում, ՋԻՆԱՊԱՀԻ Գնումների համակարգողը Հանձնաժողովի անդամների ներկայությամբ կբացի ներկայացված Մրցութային Հայտերը և կկազմի դրանց վերաբերյալ ամփոփ տեղեկանք:

5.2. Մրցութային Հայտերով ներկայացված առաջարկները 5.1 կետով սահմանված տեղեկանքի հիման վրա քննարկվում և ամփոփվում են Հանձնաժողովի Հայտերի քննարկման և ամփոփման նիստում՝ 2026թ. նոյեմբերի 9-ին՝ ժամը 16:00-ին:

5.3. Մրցութային հանձնաժողովը քննարկման և ամփոփման նիստի ավարտից հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում կկազմի Մրցույթի արդյունքների մասին արձանագրություն, որտեղ նշված կլինի հետևյալը՝

- Մրցութային հայտերի բացման, ինչպես նաև դրանց ամփոփման վայրը, ամսաթիվը և ժամը, ինչպես նաև Մրցութային հանձնաժողովի անդամների, նիստին մասնակցող հրավիրված մասնագետների անունները, ազգանունները և պաշտոնները,
- Մրցութային հայտերի վերաբերյալ տեղեկություններ,
- Մրցույթում Հաղթողի (Հաղթողների) անունը/անվանումը՝ ըստ այն նախապատվության չափորոշիչների, որոնց հիման վրա Մրցույթի Մասնակիցներից մեկը ճանաչվել է Հաղթող,
- այլ անհրաժեշտ տեղեկություններ:

5.4. Մրցույթի արդյունքներն ամփոփելուց հետո Մրցույթում Հաղթող է ճանաչվում առավել բարձր գնահատական ստացած առաջարկը՝ 2026թ. նոյեմբերի 10-ին: Առաջարկը գնահատելիս հաշվի են առնվում Հանձնաժողովի կողմից սույն Հրավերի 2.3 կետով սահմանված գնահատման չափորոշիչները:

ՄԱՍ 6

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

6.1. Մրցույթում Հաղթող ճանաչված Մասնակցի հետ ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքվում է Մրցույթի ամփոփումից հետո՝ նախատեսաբար 2026թ. նոյեմբերի 23-ին:

6.2. Մրցույթում Հաղթող ճանաչված Մասնակցի հետ 6.1 կետում սահմանված ժամկետում պայմանագիր չկնքելու դեպքում ՁԻՆԱՊԱՀԸ Գնման պայմանագրի առաջարկ է ներկայացնում Մրցույթում երկրորդ, իսկ վերջինիս կողմից առաջարկը չընդունվելու դեպքում՝ երրորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

ՄԱՍ 7

7. ՄՐՑՈՒՅԹԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

7.1. Մրցույթը համարվում է չկայացած, եթե՝

1. Հայտերից ոչ մեկը չի համապատասխանում Հրավերի պայմաններին

2. Դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը

3. Սահմանված ժամկետում և կարգով Հաղթողի հետ Պայմանագիր չի կնքվել, իսկ Հաղթողից հետո երկրորդ ու երրորդ լավագույն Հայտ ներկայացրած Մասնակիցները հրաժարվել են Պայմանագիր կնքելուց

4. Մրցույթին ներկայացվել է միայն մեկ (1) Հայտ կամ ոչ մի Հայտ չի ներկայացվել

5. Առաջարկվող գինը 10%-ից ավելի է, քան Խորհրդի կողմից հաստատված բյուջեով սահմանված արժեքը

6. Չեն պահպանվել սույն Հրավերով սահմանված այլ պահանջներ։